ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հուլիսի 2022 թվականի №-Ա
ք. Երևան

«ԼՈՌՎԱ ԱՄՐՈՑ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վարչական դատավարության օրենսգրքի 92-րդ հոդվածը, 93-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերը, «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը, 23-րդ և 35-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, վարչական դատավարության կարգով քննվող №ՎԴ/3449/05/22 դատական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2022 թվականի հունիսի 13-ի «Հայցի ապահովման մասին» և հունիսի 29-ի «Հայցի ապահովման միջոցը վերացնելու մասին միջնորդությունը մերժելու մասին» որոշումները, 2022 թվականի հունիսի 13-ի կատարողական թերթը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության 2022 թվականի հունիսի 14-ի «Կատարողական վարույթ հարուցելու մասին» և «Պարտապանին որոշակի գործողություններ կատարելուն պարտադրելու կամ որոշակի գործողությունների կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու մասին» որոշումները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. «ԼՈՌՎԱ ԱՄՐՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրել «Լորիբերդ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (Լոռու մարզի Գյուլագարակ և Լորիբերդ համայնքների վարչական տարածքներում, Կուրթան և Ագարակ բնակավայրեր)՝ Ձորագետ գետի վրա (բնական ջրահոսք) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա՝ մինչև 2040 թվականի հուլիսի 14-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2025 թվականի հուլիսի 14-ը:

2. Հաստատել «ԼՈՌՎԱ ԱՄՐՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Լորիբերդ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. «ԼՈՌՎԱ ԱՄՐՈՑ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորում-ները և փոփոխված փաստաթղթերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 14-ից և գործում է №ՎԴ/3449/05/22 դատական գործով հայցը մերժելու կամ գործի վարույթը կարճելու մասին դատական ակտ կայացվելու դեպքում՝ մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, հայցը բավարարելու մասին վճիռ կայացվելու դեպքում՝ մինչև վճռի կատարումը, իսկ կիրառված հայցի ապահովման միջոցի ավելի շուտ վերացման դեպքում՝ մինչև այդ միջոցի վերացման մասին դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հուլիսի 2022թ.